National Press Club
ՄԱԱ — ՄԱՄՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ

ՀԱՏՈՒԿ ԹՈՂԱՐԿՈՒՄ

21 ապրիլ 1999 ուրբաթ # 71 (1816)

Ազգ Azg

ԱՆՎՃԱՐ ՀԱՎԵԼՎԱԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Մամուլի ազգային ակումբի «Հայաստանը եւ ընտրությունները» ծրագրի շրջանակներում մարտի 24-ին ՀՀ ԳԱԱ համաժողովների դահլիճում կայացավ քննարկում՝ «Ընտրողների ցուցակները ՀՀ Ընտրական օրենսգրքում» թեմայով:*

*Թեմայի ընտրությունը օրինաչափ էր եւ թելադրված այն կարեւոր հանգամանքով, որ ընտրողների ցուցակները, որպես կանոն, ընտրակեղծիքների համար իրական սողանցքի հնարավորություն են միշտ «ապահովել»՝ ըստ այդմ դառնալով լուրջ խոչընդոտ ազատ ընտրական համակարգի կայացման ճանապարհին:*

*Մամուլի ազային ակումբի կազմակերպած քննարկմանը մասնակցում էին ԱԺ նախագահ Խոսրով Հարությունյանը, պատգամավորներ, լրագրողներ, ՀՀ նախագահի աշխատակազմի իրավաբանական ծառայության ղեկավար Վրեժ Գասպարյանը, միջազային կազմակերպությունների՝ ԵԱՀԿ-ի, Ընտրական համակարգերի միջազային կազմակերպության (IFES) ներկայացուցիչներ: Հարկ է նշել, որ քաղաքական կուսակցություններից միայն ՀՅԴ-ի եւ ՍԻՄ-ի ներկայացուցիչներն էին արձագանքել հրավերին, թեպետ, որպես կանոն, քաղաքական մի շարք ուժեր հաճախ ընդծում են ազատ ընտրությունների կարեւորությունը, սակայն բացակայում էին այս քննարկումից, որը նպատակամիտված էր գործնականում եւ բազմակողմանիորեն վեր հանել հնարավոր ընտրախախտումների մեխանիզմներից մեկը՝ ընտրողների ցուցակները՝ նվազեցնելու այդօրինակ խախտումների հնարավորությունը:*

*Այնուամենայնիվ, ուզում ենք հավատալ, որ մեր քաղաքական ուժերը չեն հանում իրենց պատասխանատվություն բաժինը՝ նպաստելու ազատ, արդար ընտրություններին:*

*Շնորհակալությամբ պետք է նշեմ, որ քննարկմանը, ինչպես նաեւ ներկայացվող ներդիրի հրատարակմանը ֆինանսական աջակցությունն է ցուցաբերել ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Օժանդակություն ժողովրդավարությանը եւ լավ պետական կառավարմանը» ծրագիրը:*

*Ներդիրում ներկայացվում են մարտի 24-ին կայացած քննարկման նյութերն ամբողջությամբ: Ներդիրի հրատարակումը նպատակ ունի հասարակության ավելի լայն շերտերին՝ ընտրողներին, իրազեկել իրենց իրավունքներին, տվյալ դեպքում՝ ՀՀ Ընտրական օրենսգրքի՝ «Ընտրողների ցուցակները» բաժնին:*

*Հայաստանում ազատ, արդար ընտրությունների անցկացումը կախված է մեզանից յուրաքանչյուրից:*

**Նարինե Մկրտչյան**
**Մամուլի ազգային ակումբի նախագահ**





digitised by A.R.A.R.@

ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔԸ

## ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

*Հոդված 9.*
**Ընտրողների ցուցակները կազմելը եւ վարելը**

1. Ընտրողների ցուցակներում ընդգրկվում են ընտրական իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիները:

2. Ընտրական իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ընդգրկվելու միայն ընտրողների մեկ ցուցակում:

3. Ընտրողների ցուցակները մշտապես վարվող փաստաթղթեր են եւ կազմվում են համայնքներում` ըստ ընտրական տեղամասերի: Ընտրողների ցուցակները վերանայվում են յուրաքանչյուր տարվա հունվար եւ հունիս ամիսներին:

4. Ընտրողների ցուցակները կազմում եւ վարում են համայնքների ղեկավարները` իրենց պատվիրակված լիազորությունների ուժով:

5. Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով ընտրողների ցուցակները կազմում են օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների, կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատությունների ղեկավարները եւ զինվորական մասերի ղեկավարները:

6. Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կազմվող ընտրողների ցուցակներում ընդգրկվում են ընտրական իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր բնակվում կամ գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

7. Ընտրողի բնակվելու կամ գտնվելու վայր համարվող պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության բացակայության դեպքում քաղաքացին, ընտրողների ցուցակում գրանցվելու հայտով, կարող է դիմել սահմանակից կամ բնակվելու վայրին ավելի մոտ գտնվող պետությունում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն:

8. Համայնքի ղեկավարն ընտրողների ցուցակները, ըստ տեղամասերի, քվեարկության օրվանից 40 օր առաջ տալիս է տեղամասային կենտրոնի տարածքը տնօրինող հաստատության ղեկավարին եւ մարզային ընտրական հանձնաժողով:

9. Համայնքի ղեկավարը, սկսած քվեարկության օրվանից 40 օր առաջ` 35 օրվա ընթացքում քաղաքացիների, վստահված անձանց եւ հանձնաժողովի անդամների դիմումների հիման վրա կատարում է ուղղումներ:

10. Համայնքի ղեկավարը ընտրողների ցուցակների ճշտման վերաբերյալ դիմումներին պատասխանում է երեք օրվա ընթացքում:

*Հոդված 10.*
**Քաղաքացիներին ընտրողների ցուցակներում ընդգրկելը**

1. Ընտրողների ցուցակներում պարտադիր կարգով ընդգրկվում են ընտրելու իրավունք ունեցող, տվյալ համայնքում հաշվառված բոլոր քաղաքացիները, ինչպես նաեւ տվյալ համայնքում ժամանակավորապես կամ մշտապես բնակվող եւ հաշվառում չունեցող այն քաղաքացիները ովքեր քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 5 օր առաջ, կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով, համայնքի ղեկավարին են ներկայացնում ընտրողների ցուցակում իրենց անունը, ազգանունը ընդգրկելու վերաբերյալ հայտ:

2. Կալանքի տակ գտնվող ընտրողների ցուցակները կազմում է տվյալ հաստատության ղեկավարը` մարզային ընտրական հանձնաժողովի անդամի մասնակցությամբ, քվեարկությունից 3 օր առաջ:

3. Զորամասերի տեղակայման տարածքում բնակվող զինծառայողները եւ նրանց ընտանիքների` ընտրելու իրավունք ունեցող անդամները, բացառությամբ մոտակա բնակավայրից առնվազն 50 կիլոմետր հեռու տեղակայված զինվորական մասերի զինծառայողների, ընդգրկվում են համապատասխան ընտրական տեղամասի (որի տարածքում տեղակայված է զորամասը) ընտրողների ցուցակներում` զորամասի ղեկավարության` ընդհանուր հիմունքներով ներկայացրած տվյալների հիման վրա:

4. Զորամասի տարածքից դուրս բնակվող եւ ընտրական իրավունք ունեցող զինծառայողներն ընտրողների ցուցակներում ընդգրկվում են ընդհանուր հիմունքներով:

5. Մոտակա բնակավայրից առնվազն 50 կիլոմետր հեռու տեղակայված զինվորական մասերի ընտրողների ցուցակները կազմում են զինվորական մասերի ղեկավարները եւ քվեարկությունից ոչ ուշ, քան 20 օր առաջ հանձնում են համապատասխան մարզային հանձնաժողովին:

*Հոդված 11.*
**Ընտրողների ցուցակներին ներկայացվող պահանջները**

1. Ընտրողների ցուցակներում նշվում են քաղաքացիների ազգանունը, անունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը եւ հասցեն:

2. Ընտրողների ցուցակները կազմվում են ըստ քաղաքացիների հաշվառման հասցեների: Հաշվառում չունեցող քաղաքացիներին ընտրողների ցուցակներում ընդգրկելու կարգը սահմանում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

3. Ընտրողների ցուցակները կազմվում են մատյանի ձեւով եւ էջակալվում մինչեւ 1000 ընտրողի քանակով: Ընտրողների ցուցակի յուրաքանչյուր էջն ստորագրում եւ կնքում է համայնքի ղեկավարը:

*Հոդված 12.*
**Ընտրողների ցուցակների մատչելիությունը**

1. Յուրաքանչյուր ոք կարող է ազատորեն ծանոթանալ ընտրողների ցուցակներին:

2. Տեղամասային կենտրոնի տարածքը տնօրինող հաստատության ղեկավարը քվեարկությունից 40 օր առաջ ընտրողների ցուցակների մեկ օրինակը փակցնում է տեղամասային կենտրոնում` բոլորի համար տեսանելի տեղում:

3. Տեղամասային կենտրոնում ընտրողների ցուցակների հետ պարտադիր փակցվում է նաեւ տեղեկանք` այդ ցուցակներում անճշտությունների վերաբերյալ դիմումներ տալու ժամկետների, տեղի, դրանց քննարկման կարգի, ժամանակի եւ պայմանների մասին:

4. Ընտրողների ցուցակի վերջնական օրինակը քվեարկությունից 4 օր առաջ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը փակցնում է տեղամասային կենտրոնում` բոլորի համար տեսանելի տեղում:

5. Քվեարկությունից հետո ընտրողների ցուցակներն առնվազն 7 օր փակցված են մնում տեղամասային կենտրոնում:

6. Յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի համայնքի ղեկավարից ստանալու տվյալ տեղամասային ընտրողների ցուցակների պատճենները` կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած վճարով: Համայնքի ղեկավարը պարտավոր է 3 օրվա ընթացքում քաղաքացուն տրամադրել ընտրողների համապատասխան ցուցակը:

*Հոդված 13.*
**Տեղամասային ընտրական հանձնաժողովներին ընտրողների ցուցակներ տրամադրելը**

1. Համայնքների` մոտակա բնակավայրերից առնվազն 50 կմ հեռու տեղակայված զինվորական մասերի ղեկավարները, ոչ ուշ, քան քվեարկությունից 4 օր, իսկ կալանքի տակ պահելու լիազորություն ունեցող հաստատությունների ղեկավարները` 2 օր առաջ, ընտրողների ցուցակների երկու օրինակը հանձնում են տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին:

2. Տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավունք չունի իր նախաձեռնությամբ որեւէ փոփոխություն` լրացում կամ ճշտում կատարել ընտրողների ցուցակներում:

*Հոդված 14.*
**Ընտրողների ցուցակների անճշտությունների վերաբերյալ դիմումները քննարկելու եւ ցուցակները ճշտելու կարգը**

1. Յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի, ոչ ուշ քան քվեարկությունից 5 օր առաջ ընտրողների ցուցակների անճշտությունների, իրեն կամ այլ քաղաքացու` ընտրողների ցուցակում ընդգրկելու կամ ընտրողների ցուցակից հանելու հարցով դիմել համայնքի ղեկավարին: Դիմումները տրվում են գրավոր:

2. Համայնքի ղեկավարը 3 օրվա ընթացքում քննարկում է ընտրողների ցուցակների անճշտությունների վերաբերյալ դիմումները, կայացնում որոշումներ, քաղաքացիներին գրավոր տեղեկացնում իրենց դիմումների քննարկման արդյունքների մասին: Հնարավորության դեպքում տեղեկացվում են նաեւ այն քաղաքացիները, որոնց անունը, ազգանունը հանված են ընտրողների ցուցակներից:

3.Ցուցակներում անճշտությունների վերաբերյալ վեճերը կարող են բողոքարկվել դատարան: Դատարանը պարտավոր է հնգօրյա ժամկետում քննել այդ բողոքները, իսկ քվեարկության օրվանից առաջ` հնգօրյա ժամկետում, ինչպես նաեւ քվեարկության օրն ստացված բողոքները քննել անհապաղ եւ կայացնել որոշում, որը բողոքարկման ենթակա չէ: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը դատարանի որոշման հիման վրա կազմում է ընտրողների լրացուցիչ ցուցակ` դրան կցելով դատարանի որոշման պատճենը:

digitised by A.R.A.R.@

